ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. Ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

07 սեպտեմբերի 2017թվականի N 106 -Ա

## ՆՈՐԻԿ ՍՈՒՐԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆՊԱՏԿԱՆՈՂ 07-015-0009-0020 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.1804 ՀԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա և գտնվում է բնակելի կառուցապատման գոտում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Նորիկ Եղիազարյանի դիմումը՝ ինքնակամ շինությունը օրինական ճանաչելու մասին, **որոշում եմ՝***

1. Ճանաչել օրինական Նորիկ Սուրիկի Եղիազարյանին պատկանող, գ.Արզական, Նաիրի Զարյան փողոց 49 հասցեում գտնվող 07-015-0009-0020 ծածկագրի հողամասից առանձնացված 0.1804հա բնակելի կառուցապատման հողամասում 2015 թվականին ինքնակամ կառուցված 88.20 քմ արտաքին մակերեսով շինությունը /անասնաշենք/:
2. Կառուցապատողից համայնքի բյուջե գանձել 111132 /մեկ հարյուր տասնմեկ հազար հարյուր երեսուներկու / դրամ՝ որպես օրինականացման վճար:
3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

գ. Արզական-
07 սեպտեմբերի 2017 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք

Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

07 սեպտեմբերի 2017թվականի N 107 -Ա

## ՆՈՐԻԿ ՍՈՒՐԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-015-0009-0020 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.2836 ՀԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականիդեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 32-րդ և 48-րդ կետերով, հիմք ընդունելով Արզական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 49-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա և գտնվում է բնակելի կառուցապատման գոտում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Նորիկ Եղիազարյանի դիմումը՝ ինքնակամ շինությունը օրինական ճանաչելու մասին, որոշում եմ՝*

1. Ճանաչել օրինական Նորիկ Սուրիկի Եղիազարյանին պատկանող, գ.Արզական, Նաիրի Զարյան փողոց 49 հասցեում գտնվող 07-015-0009-0020 ծածկագրի հողամասից առանձնացված 0.2836հա բնակելի կառուցապատման հողամասում 2008 թվականին ինքնակամ կառուցված 39.66 քմ արտաքին մակերեսով շինությունը /բնակելի տուն/:
2. Կառուցապատողից համայնքի բյուջե գանձել 83286 /ութսուներեք հազար երկու հարյուր ութսունվեց / դրամ՝ որպես օրինականացման վճար:
3. Փոփոխել գոյություն ունեցող, 1996 թվականին կառուցված 97.22քմ ընդհանուր մակերեսով «օժանդակ շինության» գործառնական նշանակությունը՝ «բնակելի տան» :
4. Առանձնացված հողամասը հասցեավորել «գ. Արզական, Նաիրի Զարյան փողոց 49/1» հասցեով:

5. Նորիկ Եղիազարյանից համայնքի բյուջե գանձել 1000 /մեկ հազար/ դրամ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ն.Մովսեսյան

գ. Արզական
07 սեպտեմբերի 2017 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# ՈՐՈՇՈՒՄ

07 սեպտեմբերի 2017 թվականի N 108-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳԾԻԳ>> ՊԻ -ԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<ԳԾԻԳ>> ՊԻ –ի հայտը, **որոշում եմ՝**

1.Տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<ԳԾԻԳ>> ՊԻ -ին Արզական համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ն. Մովսեսյան

07 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@yandex.ru

## *ՈՐՈՇՈՒՄ*

07 սեպտեմբերի 2017 թվականի N 109-Ա

## ՔԱՋԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 9)-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24 -ի N49-Ն որոշումը 2017 թվականի հուլիսի 14-ի ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի N-7 ակտը և Քաջիկ Հովհաննիսյանի դիմումը, ***որոշում եմ՝***

1. Տալ Քաջիկ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-015-001-018 ծածկագրի գ.Արզական Բարեկամության փողոց, 93 հասցեում գտնվող բնակելի տան շհագործման թույլտվություն /ավարտված շինարարության շահագործման փաստագրում/:

2. Կառուցապատողից համայնքի բյուջե գանձել 3000 /երեք հազար/ դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

07 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru arzakan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2017 թվականի N 110-Ա

## ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերով, նկատի ունենալով, որ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, գտնվում է բնակելի կառուցապատման գոտում, շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,* ***որոշում եմ՝***

1. Արզական համայնքի սեփականություն հանդիսացող 07-015-0071-0076 ծածկագրի 2.46 հա բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 57.75 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ տնտեսական շինություն համարել Արզական գյուղական համայնքի սեփականություն և ճանաչել օրինական՝ համաձայն հատակագծի:
2. 2,46 հա բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացնել 57.75 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությամբ զբաղեցրած 100 քմ հողամասը՝ համաձայն հատակագծի:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, գ.Արզական Չարենցավանի խճուղի, 1-ին փակուղի, 4/5:

4. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Հարություն Թադևոսյանին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք ) տրամադրելու մասին:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Կոտայքի մարզային ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ն. ՄՈՎՍԵՍՅԱՆ

12 սեպտեմբերի 2017 թվական
գ.Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

12 սեպտեմբերի 2017 թվականի N 111-Ա

## ՀՐԱՅՅԱ ԵՎ ԵԼԵՆԱ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԻՐԱ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 9)-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24 -ի N49-Ն որոշումը 2017 թվականի օգոստոսի 22-ի ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի N 16 ակտը և Հրայա Հակոբյանի դիմումը, ***որոշում եմ՝***

1. Տալ Հրայյա և Ելենա Հակոբյաններին և Նաիրա Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող 07-015-022-009 ծածկագրի գ.Արզական Բարեկամության փողոց, 1 հասցեում գտնվող տնտեսական շինության շահագործման թույլտվություն /ավարտական ակտ/:

2. Կառուցապատողից համայնքիչ բյուջե գանձել 3000 /երեք հազար/ դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

12 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru, **arzakan.kotayq@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2017 թվականի N 112 – Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 07-015-0504-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 2)-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12ի N286-Ն որոշման 46.2 կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով Արզական համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 11 –ի N 33-Ա որոշումը, քաղաքացի Հրայր Ավետիսյանի դիմումը,* ***որոշում եմ՝***

1.Առևտրի սրահ կառուցելու համար Հրայր Ավետիսյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Արզական համայնքի սեփականություն հանդիսացող, ընդհանուր օգտագործման տարածքների, գ.Արզական Թեղենիքի խճուղի 8/1 հասցեի, 07-015-0504-0003 ծածկագրի 20.0 քմ հողամասը՝ 50 տարի ժամկետով, 6000 /վեց հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

2.Հրայր Ավետիսյանի հետ կնքել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու պայմանագիր:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

12 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

Ն. Մովսեսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք

Հեռ. ( 0226) 6-17- 97 E:mail : arzakan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2017 թվականի N 113–Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ>> 4729 ՀՈԴՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արզական համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի 1071 «Սոց.հատուկ արտոնություններ» գործառնական դասակարգման «Այլ նպաստներ» 4729 սինթետիկ հաշվից հատկացնել 20000 /քսան հազար / դրամ, որպես օգնություն՝

Նվարդ Թորոսյան 20000 /քսան հազար/

2. Հաշվապահին՝ սահմանված կարգով կատարել օգնության վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն.Մովսեսյան*

13 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

14 սեպտեմբերի 2017 թվականի N 114-Ա

## << ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ>> ԲԲԸ-ԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման դրույթներով և համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 49-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետով, հիմք ընդունելով <<ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ>> ԲԲԸ-ի հայտը,* ***որոշում եմ՝***

1.Տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասում քոթեջների կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Կառուցապատողից համայնքի բյուջե գանձել տեղական վճար՝ 3000 /երեք հազար/ դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

14 սեպտեմբերի 2017 թվականի
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

19 սեպտեմբերի 2017 թվականի N 115-Ա

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 05-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով.*

***որոշում եմ՝***

1. 2017 թվականի նոյեմբերի 05-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների կազմակերպման համար սահմանել երկու տեղամասային կենտրոն՝

   1) Արզականի միջնակարգ դպրոց – հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Արզական, Հ. Բաբաջանյան 1/1:

   2) Արզականի մանկապարտեզ – հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Արզական, Հ. Բաբաջանյան 3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

19 սեպտեմբերի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# ՈՐՈՇՈՒՄ

19 սեպտեմբերի 2017 թվականի N 116 -Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ 09-Ի N 99-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի 9-րդ կետով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 21-ի N 13-Ա կարգադրությունը, ***որոշում եմ՝***

1.Արզական համայնքի 2017 թվականի օգոստոսի 09-ի <<Կոտայքի մարզի Արզականի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին>> N 99-Ա որոշման 2-րդ կետի <<համայնքի ղեկավարի տեղակալի>> բառերը փոխարինել <<գլխավոր մասնագետ Արմինե Մարգարյանի>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

19 սեպտեմբերի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

22 սեպտեմբերի 2017 թվականի N 117 -Ա

## ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, ***որոշում եմ՝***

1. 2017 թվականի նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քարոզչական պաստառների փակցնելու համար Արզական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Բջնիի խճուղու և Երևանի փողոցի հատման խաչմերուկ (մինչև 5 քմ)

2) Երևանի փողոցի և Բարեկամության փողոցի հատման խաչմերուկ (մինչև 5 քմ)

3) Երևանի փողոցի և Եղիշե Չարենցի փողոցի հատման խաչմերուկ (մինչև 5 քմ)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

***Ն. Մովսեսյան***

22 սեպտեմբերի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. ( 0226) 6-17- 97 E:mail : arzakan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 սեպտեմբերի 2017 թվականի N 118–Ա**

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ>> 4729 ՀՈԴՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ***որոշում եմ՝***

1. Արզական համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի 1071 «Սոց.հատուկ արտոնություններ» գործառական դասակարգման «Այլ նպաստներ» 4729 սինթետիկ հաշվից հատկացնել 60000 /վաթսուն հազար / դրամ, որպես օգնություն՝

| | |
|---|---|
| Հայրապետ Հայրապետյան | 20000 /քսան հազար/ |
| Սուսաննա Հարությունյան | 20000 /քսան հազար/ |
| Արփիկ Հակոբյան | 20000 /քսան հազար/ |

2. Հաշվապահին՝ սահմանված կարգով կատարել օգնության վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն.Մովսեսյան*

25 սեպտեմբերի 2017 թվական
գ. Արզական